

**“ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԳ” ՆԻԻՔԸ
ԻՆՉՊԵՐՍ ԸՆԴՀԱՆՐԱՑԱԻ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ԿՈՉՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ**

1. “Վերստին Ծնունդ”
2. Վերստին Ծնունդ
3. Իմացական ճգնաժամ

**HOW DID "YOU MUST BE BORN AGAIN" SLOGAN
BECOME A CATCHWORD IN
EVANGELICAL CHURCHES**

**ԱԼՊԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ**

“ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԳ” ՆԻԿՔԸ ԻՆՉՊԷՍ ԸՆԴՀԱՆՐԱՅԱԿ ԱԿՏԱՐԱՆԱԿԱՆ ԿՈՉՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Պապական Եկեղեցին իր հզօր իջխանութեամբ տիրապետած էր Բոլոնիայէ ու Հունգարիայէ մինչեւ Սպանիա: Հռոմէական Սուրբ Կայսրութիւնը միահեծան էր ուր *հոգեւոր* հարցերու փոխարէն կը բնաւարկուէին կրօնական *վարդապետական* խնդիրներ:

Կրօնական հաստատութիւններ ու եկեղեցիներ երբ անկարելիոր դառնան իրենց առաջնահերթ *(Անտարակիւն, պարտականութեան ու կը ձգտին նիւթական ու փառամոլութեան հոսանքին, անկարելի է, որ ջերմեռանդ փոքրամասնութիւններ և հոգեզգայնիկ բարեպաշտներ՝ իրե՛նք չհետաքրքրուին ու չկազմակերպուին, իրե՛նց հոգեւոր լուսաւորումին չափով, որպէս բարեպաշտական միաբանութիւններ:*

Այսպիսի կրօնական ուխտեր և կազմակերպչական դասակարգեր գոյութիւն ունեցած են բոլոր պատմական եկեղեցիներու ծոցը ինչպէս Ֆրանսիականներ, Տօմիսիկեաններ և Յիսուսեաններ, Պապական Եկեղեցւոյն մէջ:

Հայոց մէջ -

1. Գրիգոր Փէջտիմալճեանի Ընծայարանը Պոլսոյ Պատրիարքարանին մէջ:
2. Տր. Աւետիս Երէցեանի "Եկեղեցասիրաց" կազմակերպութիւնը Կեսարիոյ մէջ: Հետաքրքիր եղողներ կրնան կարդալ Ա. Ակաօյաճեանի "Պատմութիւն Հայ Կեսարիոյ, էջ՝ 1054-1057:

Արդի Զեֆօւլավակիոյ Սորավիա նահանգին մէջ, 1415-ին ճոն Հուսի նահատակութեամբ սկսաւ բարեկարգչական Եկեղեցի մը 1457-ին ու կոչուեցաւ "Եղբայրներու Միութիւն" (Unitas Fratrum): Այս յարանուանութիւնը տակաւին կը շարունակէ ու կը գործէ մինչեւ մեր օրերը:

Սոյն միութեան անդամները ուխտեցին.-

ա. Ընդունիլ ու հաւատալ միայն Աստուածաշունչ մատեանը որպէս կանոն կենցաղի:

բ. Կիրարկել ու գործարդել Ա. Գրային կարգապահութիւն:

Սոյն "Եղբայրներու Միութիւն"ը արագօրէն աճեցաւ ու Պոնեմիայէ ու Սորավիայէ տարածուեցաւ մինչեւ Բոլոնիա, Արեւելեան Փրոսիա և Հունգարիա: 1500 թուականին այս շարժումը ունեցաւ 400 թեմ և 200.000 անդամ: 1570-ին այս միութեան ջերմեռանդ գիտնական անդամները Աստուածաշունչ մատեանը թարգմանեցին Զեֆոսլովաք լեզուին: Անոնք հիմնեցին դպրոցներ, համալսարաններ ու աստուածաբանական ճեմարաններ: Այս եղբայրներու միութիւնը առաջին եկեղեցին հանդիսացաւ որ հրատարակէ

Հոգեւոր երգեր իր հաւատացեալներու պաշտամունքին համար 1501-ին:

Ուժեղ և հզօր աճումին և գործունէութեան պատճառաւ Բաղաբալան ու Պապական հակաքարեկարգութեան (Counter Reformation)-ի քունդասումները, ու 30 Տարուայ Պատերազմը ջախջախեցին Մորավիոյ "Եղբայրներու Միութիւն"ը: Մակայն կարգ մը Միութեան ժողովարանները Բոլոնիոյ և Հունգարիոյ մէջ շարունակեցին մինչեւ 17-րդ դար: Թէեւ Պոմերանիոյ և Մորավիոյ եկեղեցիները ջնջուեցան, սակայն հաւատարիմ ու ջերմեռանդ հաւատացեալներ շարունակեցին ու պահպանեցին իրենց հաւատքի սերմերը, միջոց յուսալով, որ օր մը յարութիւն կ'առնէ իրենց եկեղեցին:

Բազմաթիւ չարչարաններէ, հալածանքներէ ու նահատակութիւններէ վերջ, 1722-ին այս գաղտնի պահուած հաւատքի սերմը յարութիւն առաւ ու ծաղկեցաւ Մախունեան (Գերմանական) հողի վրայ: Այդ տարին խումբ մը "Միութեան" փախստական անդամներ Մորավիայէն, որոնք պահած էին իրենց պապենական աւանդութիւնը, ապաստան գտան Մախունիոյ մէջ կոմս Նիգոլա Լուսովիկ Վոն Զինգլէնտորֆի իշխանութեան ներքեւ:

Այս հաստատութեան ապահովութեան մէջ, փախստական Մորավիացիներու միացան նաեւ գանազան ջերմեռանդ հաւատացեալներ՝ Գերման Աւետարանական եկեղեցիներէն: Երկու տասնեակ տարիներու ընթացքին այս նոր "Եղբայրներու Միութիւն"ը գանազան թեմեր բացաւ Եւրոպայի կարգ մը երկիրներու, Անգլիոյ ու Ամերիկայի մէջ:

Հաւատքի ու միութենական սոյն ջերմեռանդ հոգին այնպիսի հրաշալիքներ և հոգեկան արթնութիւններ գործեց մարդոց կեանքերէն ներս, որ 1727-ին ներջնջեց ու մղեց Աւետարանական Մորավեան եկեղեցին դէպի Համաշխարհային Միսիոնարական շարժման:

Աստուած հրաշքներու համատարած Զօրութիւնն է ու կանոնի ներքեւ չի պարունակուիր, որովհետեւ Ի՛նքն է գերագոյն Կանոնը: 1735 թուականներուն Անգլիոյ մէջ կ'ապրէր սրբակենցաղ ու հոգեւոր կարգապահութեան (Spiritual discipline) նախանձախնդիր Անկլիգան եկեղեցւոյ ճոն Ուէպլի անունով Բահանայ մը: Անկլիգան եկեղեցին գտնելով ճոն Ուէպլին որպէս ջերմեռանդ ֆարոգիչ, զինք ուղարկեց Ամերիկա որպէս միսիոնար գործելու համար Ճորճիա Նահանգի հնդիկներուն մէջ:

Իր գործունէութեան ընթացքին, ճոն Ուէպլի ծանօթացաւ Մորավեական Եղբայրական Միութեան, որոնք զինք կանխած էին հաստատելով նոյն միութենական թեմ մը Ճորճիա Նահանգին մէջ: Ճոն Ուէպլի ձախողած ըլլալուն համար իր աւետարանչական գործունէութեան մէջ, ետ կանչուեցաւ Անգլիա 1738-ին:

Անգլիա վերադարձին, ան գնաց ու շարունակեց իր բարեկամութիւնը Մորավիացիներու հետ, որոնք կանուխէն հաստատուած էին Անգլիա: Ճոն Ուէպլի՝ իր պատանեկան ջրջանէն սկսեալ միտում ունեցած էր խորհրդաբանական զգացումներու: Ան եղած է ջերմեռանդ ուսումնասիրողը

Թովմաս Ա. Զեմփիսի "Քրիստոսի Նմանութիւն" (Immitation of Christ) գրութեան, որ պարունակութեամբ ու հոգիով ամենամօտ գրուածքն է Ս. Գրիգոր Նարեկացիի "Մատեան Ողբերգութեան": Խորհրդածել և խորհրդաբանել կատարն է ու մղիչ ուժը աստուածային չնգեկան ներկայութեան և փոխ յարաբերութեան ոեւէ անձի մը մէջ: Մարդ արարածը կը հասնի այս բարձունքը, մի միայն Աստուծոյ շնորհիւ, որպէս պարգեւ:

Ճոն Ուէսլիի սերտ յարաբերութիւնը Մորավիացիներու Միութեան հետ, կասկածելի դարձուցած էր զինք Անկլիքըն եկեղեցականներուն: Ըստ իր վկայութեան, սոյն միութեան պաշտամունքի մը պահուն ան կ'ունենայ հոգեկան արթնութիւն մը, որ սապէս կը բացատրէ ինք. *«Այսօր արտասովոր կերպով խանդավարութիւնը (շերմանալը) զգացի ...*: Սոյն փորձառութեան հետեւանօք ճոն Ուէսլի սկսաւ փարօզել *«անձ նակար»* փրկութիւն և *«մեղքերու թողութեան վստահութիւնը»*: Սոյն և այլեայլ պատճառներով ու հակառակութիւններով ճոն Ուէսլիին կ'արգիլուի փարօզել Անկլիգան եկեղեցիներու մէջ:

Հետեւաբար ճոն Ուէսլիի համախոհներն ու գաղափարակիցները փաշալերեցին զինք որ աւետարանչական փարօզութիւններ կատարէ բացօթեայ դաշտերու մէջ: Այս փարօզութիւնները տեղի կ'ունենային հազարաւորներու ներկայութեան: Ան հետեւեցաւ ճոնաթան էտուարտս և ճորճ Ուայթֆիլտ ամերիկացի փարօզիչներու: 50 տարիներ, ճոն Վէսլի սոյն արթնութեան աւետարանչական վկայութիւնը փարօզեց անդադար ուր որ առիթը ներկայացաւ:

«Աստուած բազմապիսի ձեւերով և այլազան շրինակներով» կը գործէ, կը խօսի և կը յայտնուի Իր եկեղեցիին: Հաւանական է, և ստոյգ, որ Աստուած գործած ու խօսած է բազմաթիւ և այլազան կերպերով -

Աստուած խօսեցաւ հրեայ ժողովուրդին, որ յետոյ դարձաւ Երուսաղէմի տաճարը:

1. Աստուած խօսեցաւ Աքրահամ նահապետին հետ հրեշտակներու միջոցով:
2. Մովսէս մարգարէ, Աստուծոյ խորանին ծիսակատարութեամբ պատգամաւորութեամբ խօսեցաւ հրեայ ազգին:
3. Բաբելոնէ վերադարձած հրեաներ զԱստուած պաշտեցին բազմահարիւր Մինակոկներու (ժողովարաններու) մէջ:
4. Յիսուս Քրիստոս փարօզեց Հրէաստանի ու Գալիլիոյ դաշտերուն և ծովեզերեայ մարգագետիններու ընդարձակութեան մէջ:
5. Պատմական եկեղեցիները, սկսեալ Երրորդ դարէն, կազմակերպեցին Ս. Պատարագի պաշտամունքային ձեւերը:
6. Արեւմտեան Բողոքական յարանուանութիւններ, 17-րդ Դարէն սկսեալ կը փարօզեն "Երկրորդ ծնունդ"ը:

Յիսուս Զրիստոս երբ հարցազրոյց մը ունեցաւ Ամարուհիի մը հետ, ըսաւ անոր.

«Հոգի է Աստուած, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ երկրպագութիւն ընեն»--Յով. Դ. 26:

Վերոյիշեալ պաշտամունքի վեց ձեւերն ալ ունին իրենց *ուրոյն* օգտակարութիւնը եթէ *համաշրուին* ու բացատրուին: Հաւատացեալներ լրջօրէն պաշտելու են զԱստուած *Հոգիով ու ճշմարտութեամբ*: Ապա թէ ոչ, պաշտամունքն ու երկրպագութիւնը կը դառնան "Չայն բարբառոյ յանապատի", ինչպէս Զրիստոս ըսած է մեզի.

«Դուք երկրպագութիւն կ'ընէ՛ք անոր զոր չէ՛ք ճանչնար»:

Ինչո՞ւ: Արովհետեւ Աովսէսի Խորանին ծիսակատարութիւնը ի վերջոյ դարձաւ անհոգի *օրէնադրութիւն* և մարգարէական ճառախօսութիւնները փոխուեցան *ազգայնական ջեղապաշտութեան*: Հաւատացեալ մը երբ շրջափակէ աստուածային յայտնութիւնը, ու ջանայ կաղապարել Ա. Հոգւոյն գործունէութիւնը, իր մտածումներուն, գաղափարներուն և կարծեցեալ աստուածաբանական տեսութիւններուն մէջ, ան կաշկանդած կ'ըլլայ *իմզիմը*: Յիսուս Զրիստոս այսպիսի հաւատացեալներու կ'ըսէ.

«... Զու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ մարդոց»--Մատթ. ԺԶ. 23:

Վերոյիշեալ պատճառներու հետեւանալով, Աստուած բազմապիսի ձեւերով ու այլազան օրինակներով կը յայտնէ Իր պատգամները, կ'իմացնէ Իր բեղուն Միտքը, հզօր Կամքը և բազմարդիւն ճիգը դարերու հողովումի շրջանին: Հաւատացեալներ, ընդհանրապէս, փականքի տակ կը դնեն ամէն նորութիւն՝ լեզու, միտք և հաւատք: Պօղոս առաքեալ Թեսաղոնիկեցւոյ Եկեղեցիի հաւատացեալները կը բաջալերէ ըսելով.

«Մի՛ մարէ՛ք Հոգին, մի՛ արհամարհէ՛ք մարգարէութիւնները, Ըննեցէ՛ք ամէն բան, բարին ամո՛ւր պահեցէ՛ք, հեռո՛ւ կեցէ՛ք ամէն չար բանէ»--Ա. Թեսա. Ե. 19-22:

Երկրորդ, Աստուածայայտնութիւնը ո՛չ *գիյ* է ու ո՛չ ալ պատկերազարդ *նկարչութիւն*: Աստուծոյ պատգամը՝ **ԱԻԵՏԱՐԱՆ** է: Մոռնալու չէ, որ Յիսուս Զրիստոս Ինք չգրեց Աւետարանը, այլ **ԱՊՐԵՏԱՊ** գայն: Ուստի "Աւետարան" բառը գիրք մը չէ՛, այլ ապրող ու կենդանի Իրականութիւն՝ Յիսուս Զրիստոսի **Անձնաւորութիւնն** է: Այլ խօսքով, Թափանցե՛լ է Աւետարաններու *գիրքին*, ետին ծածկուած հոգեհմայ **Խորհուրդին**:

Ատաբերենք մեր Տիրոջ խօսքը որ ըսաւ Ամարուհիին.

«Աստուած հոգի է ու անոր երկրպագողները պէտք է հոգիով ու ճշմարտութեամբ երկրպագեն»:

--Յով. 7. 26

Ոչ թէ բառեր արտասանեն, և միայն ծիսակատարութիւններ կատարեն առանց խորհելու անոնց թափուն իմաստը: Ի՞նչ նշանակութիւն ունի ըսել. *«Եւ վերստին ծնած էրիստոնեայ եմ»* երբ անոր իմաստն ու գօրութիւնը *չենք ապրիր*. Աստուծոյ *սէրը* չենք արտայայտեր ու զիրար կը *բախբասենք* ու զիրար կ'ատենք:

Տարիներու ընթացքին բառերը կրնան *ջարու նակրուիլ*, սակայն անոնց իմաստը և նշանակութիւնը կ'աղօտին ու կը դառնան *իմաստազուրկ*: 1700-ի շրջանին Արեւմտեան եկեղեցիներու ծէսերը կորսնցուցած ըլլալով իրենց իմաստն ու բնոյթը, Աստուած յարոյց նոր գիտակցութիւն մը հաւատացեալներու հոգւոյն մէջ, որուն կոչը ուղղուած էր անոնց *անհատակա՛ն*, հասողութեան ու *անձ նակա՛ն*, փրկութեան: Այդ դարուն կարգախօսը դարձաւ «վերստին Ծնունդ»ը:

վերստին Ծնունդի նորայայտ աստուածաբանական տեսութիւնը ծաւալեցաւ առաւելապէս անգլիախօս ժողովուրդներու մէջ, մանաւանդ Ամերիկայի: Ճոնաթան Էտուարտս և Ճորճ Ուայթֆիլտ Ամերիկայի Բրիստոնէական ըմբռնումին վրայ Բանդակեցին վերոյիջեալ կարգախօսը:

Ամերիկա ըլլալով հրատարակչական ծանուցման (advertising) ոստան, դժբախտաբար կրօնատարածումն ու հաւատքի վկայութիւնն ալ դարձաւ տեսակ մը կրօնական *տո և տուր*: Ինչպէս Մովսէսի ծիսակատարութիւնը, Քրիստոսի շրջանին, կորսնցուցած էր իր խորհրդաբանական գօրութիւնը և արտադրած սադուկեցիներ ու փարիսեցիներ, որոնք, լուսեղէն Բարոզիչ Քրիստոսի կողմէ կոչուեցան *իսկերս ծնունդներ*, նոյնպէս ալ փլիզէ եղած և իմաստազրկուած «վերստին ծնած էրիստոնեայ եմ» ըսող համաշխարհային հեռատեսիլի Բարոզիչներ՝ Ճիմ Պէյքըր և Ճիմի Սուակարթ և անոնց արբանեակները սնանկացուցին, մթագնեցին ու արժեքազրկեցին մեր Տիրոջ «Պէտք է Բեզի վերստին ծնանիլ» հմայագեղ ու խորհրդագեղ բառերը:

Այսօր եկեղեցիները և հաւատացեալները իրարմէ բաժնող գլխաւոր պատճառները անոնց *փլիզի* դարձած խօսքերն են, որոնք այլեւս կորսնցուցած են իրենց արժեքը սխալ գործածուելով: Այսօր եւս, «վերստին ծնած եմ», «Սուրբ Հոգին առած եմ», «ապաշխարած եմ այս ինչ թուականին» և լեզուներ խօսած եմ»-ները դարձած են յաւակնտութիւններ ու մեծամտութիւններ:

Կան բացառիկ սրբակենցաղ վերստին ծնած սուրբեր: Սակայն անոնց *անու անական նմանողականներու ն*, Յուդա առաքեալ կը գրէ.

*«Աստե՛հ... խարդախութեամբ, ուրախակից կ'ըլլան ձեզի՝
անպատկանօրէն պարարտացնելով (հարստացնելով, իրենք
զիրենք. հողմավար անջուր ամպեր, պաղակորոյս ծա-
ռեր, անպատու, կրկնապէս մեռած արմատախիլ եղած,
ծովու կատաղի ալիքներ՝ որ միջտ կը փրփրին ու կը
թափեն իրենց սեփական ամօթը, մոլար աստղեր՝ որոնց
համար պահուած է յաւիտենական խաւարին վիհը»*

--Յուդա 12-13:

Վերոյիշեալ բոլոր իրողութիւնները, առանց իրենց *կենդանի ապրումով*,
զոհաբերումով և ծառայասիրութեամբ սուկ դատարկաբանութիւններ են:
Պօղոս առաքեալ իր սրբազան երաժշտութեամբ, Կորնթացւոյ Եկեղեցիի
հաւատացեալներուն կ'ըսէ.

*«Եթէ ու նենամ ամբողջ հաւատք՝ մինչեւ իսկ լեռները
տեղափոխելու չափ, բայց սէր չուենեամ՝ ոչինչ եմ: Եւ
եթէ իմ ամբողջ ստացուածքս տամ աղքատներուն ու իմ
այս մարմինս մատնեմ այրուելու, բայց սէր չուենեամ՝
ոչինչ կը շահիմ»--ԺԳ. 2-3:*

Պատմութեան մեծագոյն անկիւնադարձը կերտող Բրիտոս ըսաւ Իր
աջակերտներուն.

*«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի, որ սիրէ՛ք զիրար,
ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէ՛ք զիրար: Եթէ
դուք զիրար սիրէ՛ք առով ամէները պիտի գիտնան թէ
դուք իմ աջակերտներս է՛ք»--Յով. ԺԳ. 34-35:*

***Բրիտոսի աջակերտ ըլլալու իսկական կնիքն ու ապացոյցը
Յիսուս Բրիտոս կը հիմնէ ԱԹՆՅՅ վրայ ու կը կնիքէ զայն:***

Որպէս բարձունքի և վստահութեան Մարմնացում, Յիսուս ուխ-
տագնացութիւն չի՛ յանձնարարէր: Աստուածաբանական հանգանակ չի՛
պահանջեր և ո՛չ ալ բլիշէ դարձած ասութիւններ կը պարտադրէ, այլ
ստուերներու փոխարէն՝ բուն ճշմարտութիւնը կը ճառագայթէ՝ *սիրել*
զՆստուած և զիրար:

Յիսուս Բրիտոսի խնդրածը Իր աջակերտներէն ոչ թէ վերացական
խօսքեր կամ կարգախօսքեր են, այլ *գործէ՛ր, ապրումներ* ու հոգեկան
անձնուիրում:

Խօսքերն ու բառերը կրնան բլիշէ դառնալ, ծէսերն ու արարո-

դութիւնները կրնան կորսնցնել իրենց հմայֆն ու խորհրդաբանութիւնը, իսկ սէրը, զոհողութիւնը, ներումը և անձնուիրումը անկորնչելի իրողութիւններ են, որոնք յաւերժօրէն ինքնաբացայայտ կ'ընեն իրենց զօրութիւնը, իմաստը և հասկացողութիւնը:

Զսաներորդ դարու սեմին եկեղեցին արթննալու է իր թմբիրէն, իր առեւտուրի նիւթապաշտ եկեղեցակա՛ն շահարկութիւններէն, անգիտակ ու անբացատրուած ծէսերու կրկնաբանութիւններէն, և ինքզինք ընծայելու է ծառայասիրութեան, նուիրուելու, զոհուելու, տալու և *սիրելու*:

Սէր բառը չէ եղած միայն ֆարոգուելու համար, այլ *կիրարկուելու՛ն*: Ծջմարտութիւն սէր և սրբութիւն պիտի կարենան պահել եկեղեցին հաստատուն: Սէրը պէտք է ողջագուրէ և համակէ մարդկային հոգին և եութիւնը, որովհետեւ երբ անձը մեռնի աշխարհի, այդ սէրն է որ պիտի գոյատեւէ: Հաւատացեալի մը հաւատքը պարտի ըլլալ անխորտակելի. անոր յոյսը՝ լուսաւոր, և սէրը՝ անփոխարինելի: Սէրը ոսկի բանալին է արհայութեան, իսկ զոջումը՝ գինը փրկութեան: Սէրը կը հերոսանայ, հաւատքը կը սրբանայ իսկ զոհողութիւնը կը դիւցազնանայ:

Խրիմեան Հայրիկին ուղղած խօսքերը Այսրնեան գերապայծառ արհեսկակապոսին.

«Այո՛, մեծ գործ է սէրը, նա կը միացնէ, ուժ և ֆաջութիւն կու տայ ժողովուրդին, մանաւանդ երբ այդ սէրը կը ֆարոգեն հովիւները, այդ տեսակ հովիւները միայն Անտաքանի Ծջմարտիս հետեւողներ են».

Պօղոս առաքեալ իր անդու աշխատանքին, յոգնութեան և հալածանքներուն մէջ կը գրէ եփեսացւոց եկեղեցիին, ըսելով.

«Սէրը ցոյց առէ՛ հանդուրժելով իրարու» --Դ. 2:

Աստուծոյ նմանելու գաղտնիքը Սէրն է, գերմարդկայինը, Ծջմարտութեան ճամբան:

Ո՛վ հաւատացեալ, ո՛վ եկեղեցաւեր, ո՛վ վերստին ծնած, մի՛ սպասեր սիրուիլ կրնա՞ս սիրել՝ սիրէ՛: Մի՛ ակնկալեր առնել կրնա՞ս տալ՝ տո՛ւր: Մի՛ սպասեր փնտոուիլ կրնա՞ս փնտուել՝ փնտուէ՛: *Հաւատաց* ու *սիրել* այն զոյգ ճառագայթարձակ ջողերն են, որոնք կը սրբացնեն մարդը և տեսանելի կը դարձնեն Անտեսանելին՝ զԱստուած:

«Զառակներս, զիրար շատ սիրեցէ՛ք, որովհետեւ եթէ դուք իրար չսիրէ՛ք, ոչ մէկը ձեզ պիտի սիրէ» --Խրիմեան Հայրիկ:

Հոգեւորութիւնը, քրիստոնէական վկայութիւնը և հաւատքը

այլամերժութեամբ ցուցադրուելու չէ, այլ Զրիստոսի սիրովը: Որովհետեւ Գողգոթան միայն աշխարհագրական անուն մը չէ բարձունքի մը, այլ Զրիստոսի Արեամբ և վկայութեամբ նուիրագործուած դէպք ու ցուացումը Հայր Աստուծոյ սիրոյն: Ուստի մենք ալ սիրո՛յ զօրութեամբ մեր հաւատքին տանք *գործնակա՛ն* արտայայտութիւն:

Յիջե՛նք աստուածային սիրոյ բխումը, որ խոնարհեցաւ աշխարհ ստեղծելու համար մարդ էակը, նոյնպէս մարդկային կեանքը պարտ է դառնալ յառաջդիմական խոյանք մը դէպի արարչական ակնադիւրը՝ սիրոյ և յոյսի՝ զոհողութեամբ ու հաւատքի տենչով:

Ինչո՞ւ:

***Որովհետեւ մարդու ինքնակատարելագործման
ուղին կ'անցնի սիրոյ մտքազտման փութայէն:***

Մայիս 27, 1995

Թորոնթօ

ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ

Յովհաննէս առաքեալ իր աւետարանին երրորդ գլխուն մէջ կը ներկայացնէ Նիկողեմոսի հարցազրոյցը Յիսուսի հետ, հետեւեալ ձեւով: Իրիկուն մը հրեայ, ուրբի՝ խորհրդարանի իջխան Նիկողեմոս կ'այցելէ Յիսուս Մարգարէն, փոխանակելու համար կրօնական գաղափարներ: Գաղափարներու սոյն փոխանակութեան ընթացքին, Յիսուս Զրիստոս կը պարզէ նորայայտ իրողութիւն մը "Վերստին Ծնունդ"ի կարիքը, Մովսէսի աջակերտ Նիկողեմոսին, որ ազգային կրօնական խտրականութեամբ և մշակութային սահմանափակ հասկացողութեամբ կ'ապրէր ու կ'ըմբռնէր իր հոգեւոր պատասխանատուութիւնները:

Զրիստոս չի բացատրէր "վերստին Ծնունդի" իրագործումը Նիկողեմոսին, այլ Ան կը գոհանայ ըսելով միայն.

***«Հովը կամ Հոգին կը փչէ ուր որ կ'ուզէ
ու անոր ձայնը կամ բարբառիլը կը լսես»:***

Յովհաննէս առաքեալ իր աւետարանին յաջորդ գլխուն մէջ (Դ. գլուխ) կը ջանայ ընդարձակել և հասկնալի դարձնել Վերստին Ծնունդի խոր իմաստը՝ կենցաղավարութիւնը վերստին Ծնած հաւատացեալի մը կեանքին մէջ:

Առաջին աննախընթաց դէպքին կը հանդիպինք, ուր Յիսուս և Մամարուհի մը (երկու հակընդդէմ կրօնական, ազգային ու գաղափարական) ըմբռնումներ սիրով ու հանդուրժողութեամբ կը խօսակցին: Յիսուսի Հոգւոյն մէջ խտրականութեան անախորժ երեւոյթ մը չկայ, այլ անոր փոխարէն սիրոյ և օժանդակող ոգի մը կը տեսնենք:

Երկրորդ. նոյն գլխուն մէջ հանդիսատես կ'ըլլանք հրաշքի մը, զոր Յիսուս կը ջնորհէ հեթանոսի մը: Ոչ միայն ո՛չ հրեայի մը, այլ Իր ազգը գերեզմարող Հոռմէացի հարիւրապետի մը ծառային:

Վերոյիջեալ երկու դէպք եղելութիւններով, Յովհաննէս առաքեալ կը ջանայ յայտնացուցանել Վերստին Ծնունդի ոգեկան խորհուրդը բոլոր Նիկողեմոսներուն, որոնք Զրիստոսի նորայայտ մարդասէր՝ Հայր Աստուածը չեն ճանչնար: Առաքեալը ոչ թէ "վերստին Ծնունդ" կը թելադրէ կամ կը պատուիրէ բոլոր հաւատացեալներուն, այլ վերստին Ծնած հաւատացեալի մը կենցաղավարութիւնը՝ ապրելակերպը ցոյց կու տայ հանդէպ իրեն պէս չհաւատացողին, իրեն գաղափարակից չեղողին, և նոյնիսկ իր թշնամիին:

Առաքեալը ցոյց կու տայ, առարկայականօրէն, թէ վերէն Ծնածի մը ոգեկան ելութիւնը լեցուն ըլլալու է սիրով հանդէպ ստուապակոծ

մարդկութեան: Ան ցոյց կու տայ նաեւ վերստին ծնածի մը ոգեպարար ազատութիւնը որ շրջափակում չի ճանչնար, ի՞րը չփնտեր, ի՞նք կը յօժարի, ի՞նք կը հանդուրժէ և ի՞նք կը զոհաբերուի:

Յիսուս կ'իջնէ երկինքի աստղազարդ հանդիսութենէն ծնանելու համար ախոռի մը մէջ, կը հալածուի Իր ազգակիցներէն, կը լքուի իր հաւատարիմ կարծուած աշակերտներէն ցոյց տալու համար Հայր Երկնաւորին անսպառ սէրը հանդէպ համայն մարդկութեան ու կ'աւանդէ Իր Հոգին ոճրապարտներու խաչին վրայ:

Այս բոլոր անիրաւութիւններու ընթացքին, Յիսուս չդադարիր հիւանդները բժշկելէ, անօթիները կերակրելէ, սգաւորները մխիթարելէ և յայտնաբերելու գերագոյն խոնարհութիւնն ու նուիրումը լուալով Իր աշակերտներուն ոտները ծնրադրելով անոնց առջեւ:

Անպաճոյճ և անյաւակնոտ ըմբռնումով կը խորհիմ թէ՛ արաբեալը՝ այս գրութեամբ կ'ուզէ բացատրել "երկրորդ ծնունդ"ի ոգի՛ն իր հաւատացեալ հօտին:

Յովհաննէս Ակրտիչ եկաւ անապատէն սակայն չխառնուեցաւ, չմիացաւ մարդոց, չբաժնեց անոնց ցաւն ու երգը, ան մ'նաց առանձինն որպէս "Ձայն բարբառոյ յանապատի": Իսկ Յիսուս, ապրեցաւ մարդոց մէջ, ու անոնց հետ: Ան *անօթեցաւ, հրտնեցաւ ու լացաւ* սգաւորներուն հետ: Ան չսպասեց նման Յովհաննէս Ակրտիչին, որ ժողովուրդները իրե՛ն գան, այլ Յիսուս Ի՛նք գնաց անոնց: Նոյնիսկ դիւահար մը բժշկելու համար Ան նաւարկեց մինչեւ Գեննեսարեթի ափը:

Յովհաննէս Ակրտիչ Բարոզեց *վախի և տարտաղի*: Աստուածը, ըսելով.

«Իժերո՛ւ ծնունդներ, ո՞վ սորվեցուց ձեզի փախչիլ վերահասու բարկութենէն ... մի՛ յաւակնի՛ք դուք ձեզի ըսելու թէ՛ Աբրահամը ու նիւ՛ք մեզի իբրեւ հայր. կ'ըսե՛մ ձեզի, որ Աստուած կարող է այս Բարերէն Աբրահամի որդիներ յարուցանել, որովհետեւ կացիներ ահա դրուած է ծառերու ն արմատին»
--Մատթ. Գ. 7-9:

«Ամէն ծառ, որ բարի պտուղ չիտար, կը կտրուի և կրակը կը նետուի: Հեծանոցը իր ձեռքին մէջ է պիտի մտնէ իր կալը ու ցորենը պիտի ժողվէ իր քանձարանին մէջ, իսկ յարդը պիտի այրէ անշէջ կրակով»--Գ. 11:

Որպէս հակապատկեր Հին Կտակարանի (Նիկողեմոսի ու Յովհաննէս Ակրտիչի) Յիսուս Բրիստոս կ'ըսէ աստուածակերտ մարդուն, բանալով Դրախտին դուռը.

**«Եկե՛ք ինձի, բոլոր յոզածներ և բռնաւորութիւններ,
և ես պիտի հանգստացնեմ ձեզ»--Մատթ. ԺԱ. 28:**

Վերստին ծնունդով հաւատացեալը ոչ միայն կը ստանայ մեղքերու թողութիւն և փրկութիւն, այլ կը ստանայ Յիսուս Զրիստոսի *նախնախնան*, ու կը լեցուի աստուածային անսպառ սիրով հանդէպ իր տառապակոծ եղբայրներուն և քոյրերուն:

**«Մենք բոլորս ալ, որ բաց երեսով Տիրոջ փառքը
կ'արտացոլացնենք հայելիի մը պէս, նոյն այդ
պատկերով կը փոխակերպուինք՝ հեազհեաէ աճող փառ
քով մը: Եւ այդ փոխակերպումը Տիրոջ Հոգին է որ
կ'իրագործէ»--Բ Կորնթ. 3.18:**

Մարդեղեալ Բանն Աստուծոյ հանդիպող անձ մը կը ստանայ նոր բնութիւն և նոր անուն: Միմոն Յովնանի որդին, կ'ըլլայ "Պետրոս" "Նոր ծնունդ" մը: Յիսուս Մարգարէն ուրացող վախկոտ աջակերտը կը դառնայ անվեհեր նահատակը հաւատքի ու եկեղեցիի: Աստուածային հրաշագործ զօրութիւնները թէ՛ բազմազան են և թէ չեն պարփակուիր մարդկային սեղմ ու սահմանափակ գիտութեամբ: Աստուած Իր բուժարար դեղագործարանէն մի միայն "ասփիրին" (ձեզի պէտք է Վերստին ծնանիլ) դեղահատը չ'արտադրեր, այլ հիաստանջ բուժիչ դեղերու անհատնում տեսակները ունի:

Իւրաքանչիւր հողածին էակ իրեն յատուկ իր նկարագրին և իր հասկացողութեան, ու զայն դարձի բերելու մասնայատուկ դեղահատը ունի Աստուած: Ս. Օգոստինոսը դարձի բերելու համար, Զրիստոս սահմանած էր Միլանո Բաղափի Ամպրոզիոս եպիսկոպոս Բարոզիչը: Ինչո՞ւ: Որովհետեւ Օգոստինոս իմաստասէր, իր ուսանողական ջրջանին Մանիքեական իմաստասիրութեան մէջ ծնած ու այդ աղանդին մէջ թրծուած էր: Օգոստինոս պա՛րտ էր "վերստին ծնանելու" որպէսզի կարենայ տեսնել երկնային հորիզոնը:

Անդին, Կորնելիոս Հռոմայեցի հազարապետը հաւատացող էր Միաստուածութեան և այցելութիւնը ընդունեց հրեջտակին, ու նախ Բան մկրտուիլը Յիսուսի անունով, ստացաւ Մուրք Հոգւոյն պարգեւը: Որպէս իր հաւատքին արդիւնք, ոչ միայն ի՛նք Բրիտանացի դարձաւ, այլ նաեւ իրեն բոլոր ընտանիքը՝ կինն ու զաւակները, բարեկամներն ու ազգականները: Պետրոս առաքեալ անոնց չպատուիրեց ըսելով. «Դուք պէտք է վերստին ծնիք», այլ ըսաւ Պետրոս. «Եկե՛ք ձեզ մկրտեմ Յիսուսի՛ անունով»:

Յիսուս Զրիստոսի հաւատացող և Անոր Եկեղեցւոյ մէջ մկրտուող ու զԱյն սիրող հաւատարիմ Հայ նահատակները Մեծ եղեռնին, "վերստին ծնունդ" ոճը լսած անգամ չէին: Անոնք Բաղեցին ախորի Գողգոթան որպէս

հարազատ Բրիստոնեաներ անվախ ու անվեհեր, որովհետև անոնք ունեին 17 դարերէ ի վեր ճառագայթող լուսեղէն Բրիստոսի հաւատքը: Անխորտակելի հաւատքի սերմը, որ փոխանցուած էր 301 թուականէն մինչեւ 1915 թուական ու կը շարունակէ ցարդ շողալ իւրաքանչիւր եկեղեցին Հայկականի խորաններէն:

Լուսեղէն Յիսուս, Զակէոսին չ'ըսաւ. *«Ընդի պէտք է վերստին ծնանիլ»*, այլ ըսաւ անոր. *«Ա՛յս ալ Աքրահավի որդի է»*. Ուստի, հաւատքի իրագործումը թէեւ *անձ նակա՛ն*, ու անհատական է, սակայն անոր *սերմը*, ըստ վարդապետաց Վարդապետին, ժառանգակա՛ն ալ է:

Կարդա՛նք միասին, անվեհեր Պօղոս առաքեալին գրած նամակը *“հոգեկան ժառանգականութեան”* մասին գրուած Տիմոթէոս սիրելի աջակերտին:

«Կը մտաբերեմ այն անկեղծ հաւատքը՝ որ քու մէջդ է և որ նախապէս կար քու մեծ մօրդ՝ Լառոդիայի և քու մօրդ՝ Եսնիկէի մէջ. վստահ եմ թէ քու մէջ ալ կայ: Ուստի, կը յիշեցնեմ քեզի, որ վերաբծարծես Աստուծոյ շնորհը որ կայ քու մէջդ՝ տրուած իմ ձեռնադրութեամբս. որովհետև Աստուած վհատութեան հոգի չէ որ տուաւ քեզի, այլ զօրութեան, սիրոյ և զգաստութեան»
--Բ. Տիմոթ. Ա. 5-7:

Պօղոս առաքեալ կը շարունակէ ու կը գրէ Հռոմի եկեղեցւոյ հաւատացեալներուն *“հոգեկան ժառանգութեան”* մասին, ըսելով.

«Անո՛նցն (Տրեաններուն, է որդեգրութիւնը և փառքը և ուխտերը և օրէնսդրութիւնը և պաշտամունքը և խոստումը. անո՛նցն են հայրերը, որոնցմէ է նաեւ Բրիստոս՝ ըստ մարմնի, և Ա՛ն է ամենուն վրայ յաւիտեանս օրհնեալ Աստուած, Ամէն»: --Հռոմ. Թ. 4-5:

Ի՞նչ պատասխանեց Տէր Յիսուս Բրիստոս երիտասարդ հարուստ իշխանին հարցումին. *«Բարի՛ վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»*.

Յիսուսի պատասխանը եղաւ. *«Պատուիրանները գիտես. Ար՛ք ջնարք մի՛ սպաննելոյ, մի՛ գողնարք, սուս մի՛ վկայելոյ, պատուէ՛ քու հայրդ ու մայրդ»*: Իսկ երբ երիտասարդ իշխանը ուզեց *կատարեալ ըլլալ*, Յիսուսի պատասխանը եղաւ. *«Գնա ծախէ՛ քու ունեցւածքդ և տո՛ւր աղքատներուն. և երկնի՛ մէջ գանձ եր պիտի ունենաս. իսկ որ ունեսեալ է՛ս եկուր»*: --Մատթ. ԺԹ. 19-21:

Հարուստ Ամերիկացի Բարոզիչները չեն ուզեր տեսնել վերոյիշեալ համարը որպէսզի իրենց հարստութիւնը և փառքը չկորսնցնեն:

Յիսուս Բրիստոս աշխարհի վրայ ապրած ժամանակ ո՛չ թէ " Super Star" մըն էր ամերիկեան ֆարոգիչներու նման, այլ " humble and scarred" Խաչեալ մը: Ոչ թէ ֆատիլաֆներով պտըտող *մեծահարուստ* մը, այլ *հեռուակ* պարզ ֆարոգիչ մը՝ և ոչ հեծեալ անձնաւորութիւն: «Վերստին Մնունդ"ի արդի ֆարոգիչներ փոխանակ *հիշչէ* ընելու և աղօտելու Յիսուսի խորախորհուրդ պատուէրը նիկողեմոս իշխանին, թող զայն *խմաստադրե՛ն* մեկնաբանե՛ն, ապրի՛ն ու իրենց կեանքն՝ զողացնեն թափուն իմաստը Յիսուս Բրիստոսի երկնառաֆ "Ձեզի պէտք է վերստին ծնիլ" բառերը:

Ի՞նչ կրօնի և հաւատի կը պատկանէին մեր մէկ ու կէս միլիոն չայ նահատակները: Իսլամ, կրապա՞շտ կամ սուրզի՞ կրօնֆին: Ձեմ ջանար նսեմացնել կամ ստորադասել "Վերստին ծնանելու" կարգախօսը կամ հրամայական պատուէրը Յիսուս Բրիստոսի:

Դարձեալ կարդանք երկու կոյրերու բժշկութիւնը, զոր Յիսուս իրագործեց խաչելութենէ մօտ 10 օր առաջ: Առաջինը երիֆով ֆողաֆին մէջ էր և կոյրին անունը Բարտիմէոս--Մարկ. Ժ. 46-52: Երկրորդ կոյրին անունը չէ յիշուած, սակայն տեղի ունեցած է Երուսաղէմի մէջ խաչելութենէ ֆանի մը օր առաջ:

Բարտիմէոսին բժշկութիւնը տեղի ունեցած էր Յիսուսի հետեւեալ խօսքով. *«Գնա՛, քու հաւատքդ քեզ փրկեց»:* Իսկ, "ի ծնէ" կոյրին բժշկութիւնը տեղի ունեցաւ սապէս

«Յիսուս թփաւ գետին և կաւ ջիւնեց թուֆով ու կաւր ծեփեց կոյրին աչքերուն վրայ և ըսաւ անոր. «Գնա լուացուէ՛ Մելովամի աւազանին մէջ»--Յով. Թ. 1-8:

Օր մը, ջատ հաւանական է, որ այս երկու բժշկուող կոյրերը հանդիպին իրարու և զիրար համբուրելով ողջագուրուին: Իրարու բժշկութիւնը իմանալու համար նստին ծարի մը շուֆին և իրենց աստուածաֆրաջ տեսութիւնը սկսին պատմել իրարու և իրենց բարեկամներուն:

Բարտիմէոս երբ կ'իմանայ որ "ի ծնէ" կոյրը կաւով բժշկուած է, կը սկսի ֆիչ մը կասկածիլ "ի ծնէ կոյրին" պատմութեան: Իսկ երբ Բարտիմէոս կը պատմէ թէ ինչպէս Յիսուս *մէկ խօսքով* պարգեւած է իրեն երկնային տեսութիւն, "ի ծնէ" կոյրը կը միջամտէ ու կ'ըսէ Բարտիմէոսին. *«Հոն կեցի՛ր բարեկաւ»:* Յիսուս մի միայն *կաւով և Մելովամի աւազանի ջուրով* է որ կը բժշկէ կոյրի մը աչքը:

Այս երկու կոյրերը, որ ողջագուրած էին զիրար ֆիչ առաջ և որ կը սիրէին իրենց Յիսուս մարգարէն, վիճաբանութեամբ զիրար սուտ համարելով, իրարմէ կը բաժնուին ու կը հեռանան:

Դժբախտաբար այս է պարագան նաեւ կարգ մը նեղմիտ հաւատացեալ՝

Յիսուսը սիրողներու անհասկացողութեան, չ'ըսեմ *ողբերգութեան*:

Հաւատացեալներս, յաճախ կը մոռնանք, որ *"Հովր (Ա. Հոգին) կը փչէ ուր որ ուզէ"*: Իսկ մենք կ'ուզենք *կաղապարի մէջ դնել* Ա. Հոգոյ գորութիւնը և գործունէութիւնը: Մնացեալ խորհրդածութիւնը կ'ուզեմ թողուլ ընթերցողներու իմացական ու հոգեկան լուսաւորութեան:

Այս գրութեամբ, իմ նպատակս է, *խմտառարել*, թէ "Վերստին ծնած եմ" յայտարարութիւնը ամենաբոյժ *"ասփիրին"* մը չէ՝ համաշխարհի ժողովուրդներուն: Մեր Տիրոջ Քրիստոսի պատուերը մի միայն "Վերստին ծնունդի" յայտարարութեամբ չ'զմուսենք որպէս *ապահովագրութեամբ անցագիր* երկինք մտնելու համար:

Յիսուս Քրիստոսի պատուերը, Իր խաչելութենէն անմիջապէս առաջ, կը խտացնէ քրիստոնէայ ըլլալը. Ան ըսաւ.

***«Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէ՛ք:
Ձեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան,
թէ դուք իմ աշակերտներս էք»***--Յիսուս--Յով. ԺԳ. 35:

Աշխարհ ինչո՞վ պիտի ճանչնայ մեր քրիստոնէութիւնը: Ձերար ***ՄԻՐԵԼՈՎ***, ուստի "Վերստին ծնիլ"ը գիրար սիրելով ցոյց տանք:

***Միրել՝ զոհողութիւն, հանդուրժողութիւն ու
ժառայութիւն կը նշանակէ:***

Մայիս 24, 1995

Հալիպոլթըն, Օնթերիօ

ԻՄԱՅԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

(Վերստին Ծնունդ)

Ճգնաժամը այն պահին է ճակատամարտին, ուր մարմնականի և հոգեկանի գոյամարտը ի լոյս կ'ընծայէ յաղթանակը մարզիկին և գաղափարականին: Այսպիսի տրամախօսութիւն մը և բացատրական իմաստասիրութիւն մըն է որ տեղի կ'ունենար Երուսաղէմի մէկ բնակարանին մէջ մինչեւ առաւօտեան լուսաբացը:

Երկու գաղափարականներ իրար ճակատած էին: Մին երկրային, իսկ միւսը երկնային: Յիսուս՝ երկնառափ Մարգարէն, Իր պերճախօս և փորձառական ապրումի գրաւականով, ջփոթութեան մատնած էր ուսքունական աստուածաբան Նիկողեմոսը: Մտաւորական իջխանաւորը, իր ուղեկորոյս դեգերումներուն մէջ այցելած էր Յիսուսին որ ճշդէ իր հաւատքի ճանապարհը և լուսաւորէ իր մտածումը:

Ռաբբունական իմաստասիրութեան անբաւարարութիւնը զգացած էր Յիսուսը սիրող Նիկողեմոս, սակայն տակաւին երկչոտ էր կրօնա-ֆաղափական իջխանը:

Համաշխարհային վերջին երկու պատերազմները ապացուցեց, թէ մարդկային վճռական պատերազմը, ոչ զէնքով է ու ոչ ալ վառոթով, այլ՝ մտածումի և գաղափարի տարածքին մէջ է: Ուստի ֆաղափագէտներ չեն ջանար գրաւել ցամաքամասեր, այլ՝ իրենց թիրախ ըրած են գրաւել մարդկային խորհուրդի և մտածումի ներաշխարհը: Այն անսահման ներխորհուրդի համաստեղութիւնը որուն կանթեղները կը լուսաւորեն տրամաբանութիւնը:

Յիսուս չ'անարգեց Նիկողեմոսին տրամաբանական հայեացքը, այլ՝ աշխատեց զգակեղորոն տրամաբանութեան՝ նորաբողբոջ կոկոն մը եւս աւելցուց: Ինչպէս հայկական առածը կ'ըսէ, *«Մէկ ծաղիկով գարուն չի գար»*, նոյնպէս մարդուն ներաշխարհը՝ աշխարհիկ իմացական ու տրամաբանութեան կաճաւոր, *երկնային*՝ լուսաւորումի կարիքը ունի: Ինչպէս *աստուած* լոյսը երկրային ու բնական եղելութիւններն ու իրերը կը մատնանշէ, նոյնպէս ալ *երկնային* լուսաւորումը, մատնացոյց կ'ընէ հոգեկան իրողութիւնները:

***«Լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին. Բանգի իրենց գործերը չար էին»*—Յով. Գ. 19:**

Ինչպէս ծագող այգալոյսը, նման ելեկտրական լոյսի, մէկ անգամէն չի լուսաւորեր իր շուրջը, այլ՝ աստիճանաբար, նոյնն է նաեւ երկնային Լոյսը երբ ծագի մարդուն ներաշխարհի սրտատաճար խորանին մէջ: Ինչպէս մարդ աստիճանաբար կը սաղմնաւորի և հետզհետէ կ'աճի ու տակաւ առ տակաւ կը մեծնայ, նոյն է նաեւ երկինքէն ծնանիլը:

Դամակոսի ճանապարհին վրայ Սողոս կայծակնահար եղաւ Յիսուսի երեւումէն: Յիսուսի այս ներուժ գօրութեան յայտնութիւնը չի փոխակերպեց Սողոսը՝ Պօղոսի, այլ զինքը կուրացուց:

Պօղոսի հոգեկան երկրորդ ծնունդը տեղի ունեցաւ Արաբիոյ անապատներու Բարանձաւներու մէջ: Սօտ երկու տարի, Յիսուսի թշնամի Սողոս, մարտնչեցաւ ինքն ի՛ր հետ: Իր կրօնափիլիսոփայութիւնը մօտեցուց Յիսուսի երկնային լուսաւորութեան: Վերոյիջեալ երկու տարիներու ընթացքին, երկնային լուսաւորութեան ներքեւ, Պօղոսի մտածումները և սրամաքանութիւնը հոգեւոր նորաբողբոջ կոկոններ ծիլ տուաւ ու իր ներհոգւոյն սրբարանի խորանի խունկին նման բոյր և անուշահոտութիւն սփռեցին:

Երկնային այս նորաբողբոջ գաղափարներն էին, որ վերակառուցին ռաբբունական Պօղոսը ու շնորհեցին անոր "երկրորդ" ծնունդ: Յիսուսի թշնամին՝ դարձաւ անվեհեր յայտարարն ու նահատակը Զրիստոսի և Անոր երկնապարարտ Աւետարանին:

Որովհետեւ Յիսուսի ապրումը (Զրիստոսի ճամբան) փաստարկութեամբ ապացուցանելի չէ՛, այլ կեանք-ապրումով: Դիւցազն Պօղոս՝ իր գերագոյն անձնագործութիւնը ըրաւ իր հաւատքին ու սիրոյն, երբ կարմիր ներկեց Հռոմի ամբիթատրոնի աւազը ի՛ր իսկ արիւնով:

Այսպիսի՛ վերածնունդի մը, նոր մարդ ըլլալու, սիրե՛լ կարենալու, լայնախոհ դառնալու հոգին, երկնայի՛ն տեսանկիւն զգենուլ է "վերստին ծնանիլ" է, ըստ Յիսուսի բացատրութեան նիկողեմոս իջխանին:

Յիսուսի Բարոզած "վերստին ծնունդ"ի խորութիւնը չհասկնալ և անոր փոխարէն ծանծաղ ու մակերեսային գլիշէ արտայայտութիւններ վկայել ու անհասկնալի դարձնել, հրաշունչ և հոգեղէն պատուերը Յիսուսի, որ յայտնաբերած էր միայն նիկողեմոս իջխանին: Մինչ ներկայ Արեւմտեան Բարոզիչները ողբերգութեան դարձուցած են զայն:

Երանի՛ թէ Յիսուսի այս աղամանդեայ ու մարգարտեայ «Վերստին Ծնունդ» ասութիւնը, մեր հաւատակից եղբայրները ուսումնասիրեն ու գիտակցօրէն և իրազեկօրէն վկայեն:

Սեպտ. 28, 1987

Թորոնթօ